ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՍԿ-ԳՀԾՁԲ-18/03 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍՏԵՂԾՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «27» փետրվարի 2018թ.

ժամը՝ 09:00

2018թ-ի փետրվարի 27-ին ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 49/9 հասցեում, տեղի ունեցավ ՀՍԿ-ԳՀԾՁԲ-18/03 ծածկագրով գնանշման հարցումով գնում կատարելու համար ստեղծված գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) հայտերի բացման նիստը (այսուհետ՝ նիստ): Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Վ Մարգարյան	«Հայրենիք-Սփյուռք Կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի օգնական–նախագահ
Լ.Գինոսյան	«Հայրենիք-Սփյուռք Կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրենի ժամանակավոր պաշտոնակատար – անդամ
Լ. Պողոսյան	«Հայրենիք-Սփյուռք Կենտրոն» ՊՈԱԿ-ի Կրթամշակութային ծրագրերի իրականացման բաժնի առաջին կարգի մասնագետ - անդամ

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Ա. Սիմոնյան	«Հայրենիք-Սփյուռք Կենտրոն» ՊՈԱԿ-ի գնումների գործընթացի մասնագետ

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Վահե Մարգարյանը, իսկ քարտուղարն էր՝ Աննա Սիմոնյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. *ՀՍԿ-ԳՀԾՁԲ-18/03* ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց (այսուհետ՝ մասնակիցներ) մասին:
2. *ՀՍԿ-ԳՀԾՁԲ-18/03* ծածկագրով գնանշման հարցման մասնակիցների կողմից ներկայացված հայտերի գնահատման մասին:
3. *ՀՍԿ-ԳՀԾՁԲ-18/03* ծածկագրով գնանշման հարցման առաջին և երկրորդ տեղեր զբաղեցրած մասնակիցներ հայտարարելու մասին:

մասին:

4.Հանձնժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1-ԻՆ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հանձնաժողովի քարտուղար Աննա Սիմոնյանը հանձնաժողովին հայտնեց, որ *ՀՍԿ-ԳՀԾՁԲ-18/03* գնանշման հարցմանը մասնակցելու հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակցի անվանում	Մասնակցի գտնվելու վայրը
1	«Էյ Էմ Էս Լայն» ՍՊԸ	Ք.Երևան,Բաշինջաղյան 175շ, բն.1

Որոշվեց՝

1. Աննա Սիմոնյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

2-ՐԴ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հանձնաժողովը արձանագրեց, որ՝

1) Մասնակցի կողմից ներկայացված ծրարները կազմված և ներկայացված են *ՀՍԿ-ԳՀԾՁԲ-18/03* գնանշման հարցման հրավերով (այսուհետ՝ հրավեր) սահմանված կարգով.

2) Բացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը.

3) Մասնակցի ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:

Որոշվեց՝

1. Մասնակցի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

3-ՐԴ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակիցը ներկայացրել է հետևյալ գները.

Հ/Հ	Ծառայության անվանում	Մասնակցի անվանումը և առաջարկած գները /ՀՀ դրամ/		Ծառայության ծեռքբերման նախահաշվային գին/ՀՀ դրամ/
		« Էյ Էմ Էս Լայն» ՍՊԸ		
		Առաջարկված գինն առանց ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գին	

1	«Արի տուն 2018թ» ծրագրի շրջանակներում սննդի կազմակերպում	15972000	15972000	16170000

Որոշվեց

1. *ՀՍԿ-ԳՀԾՁԲ-18/03* ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել ««Էյ Էմ Էս Լայն» ՍՊԸ-ին:

2. Առաջարկել հանձնաժողովի քարտուղար Աննա Սիմոնյանին էլեկտրոնային փոստի միջոցով

   2.1 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների ինչպես նաև հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

   2.2 Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ *ՀՍԿ-ԳՀԾՁԲ-18/03* ծածկագրով հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

4-ՐԴ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել ժամը 11:30, ք. Երևան, Հանրապետության 49, բն 9 հասցեում, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից համապատասխան եզրակացության ստացմանը հաջորդող աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան 2018թ. մարտի 6-ը:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Վ. Մարգարյան

Հանձնաժողովի անդամներ՝

Լ. Գինոսյան

Լ. Պողոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Սիմոնյան

Հաստատված է
2018 թ-ի փետրվարի 20-ին
Ընդամենը՝ 3 էջ

Կ. Տ

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԻ

Պատվիրատուի անունը՝ «Հայրենիք-Սփյուռք Կենտրոն» ՊՈԱԿ

Մրցույթի ծածկագիրը՝ *« ՀՍԿ-ԳՀԾՁԲ-18/03»*

Գրանցամատյանի վարման պատասխանատու՝ Ա Սիմոնյան
(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

Մաս I

Սահմանված կարգով ներկայացված մրցույթի հայտեր

Հ/հ	Մրցույթի հայտը ներկայացված մասնակցի անվանումը (անունը, ազգանունը)	Մասնակցի այն գրության ելից և պատվիրատուի նույն գրության մտից համարները, որով ներկայացվել է մրցույթի հայտը (Հայտը առձեռն ներկայացված լինելու դեպքում այն ներկայացնողի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի անվանումը և համարը)	Հայտերի ստացման		Հայտը գրանցողի ստորագրությունը	Նշագրություն
			Ամիսը, ամսաթիվը	Ժամը		
1	2	3	4	5	6	7
1	«[illegible]» ՍՊԸ	Հայտը ներկայացվել է լիազորված անձ Մուշեղ Ավետիսյանի (անձն. փաստ. 000398412)	26.02.18թ	17^{15}	[illegible]	